

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

9-րդ դասարան

Ա: Աշխատանք բնագրով: (15 միավոր)

Գեղեցկադեմ, արիասիրտ երիտասարդ էր Պարթևաց աշխարհի թագադիր և զորապետ Սուրենը. ոչ մի հաղթանդամ պարթև չէր կարող մրցել այս կորովի քաջի հետ: Հագնում էր շքեղ պատմուճան՝ ծիրանաթույր և ականակուռ, քայլում էր անհողորդ քայլվածքով՝ հայացքն առանց աջ ու ախյակ ուղղելու: Նա, Օրոդես արքայի գլխին թագ դնելով, դարձել էր նրա՝ պալատում ամենավստահելի մարդը: Սուրենը իրեն պահում էր արքայի նման. հրովարտակներ և ուղերձներ էր ուղարկում տարբեր երկրների թագավորներին, շքերթների կամ որսի դուրս գալիս հազար թիկնապահ էր ուղեկցում նրան: Չնայած նրա երեսունը դեռ չէր լրացել, այնուամենայնիվ նա շատ հարճեր ուներ: Երբ Կրասուր Ասիա հասավ, Սուրենի խորհրդով Օրոդեսն սկսեց նախապատրաստվել կովի: Դրանիկներին և սեպուհներին հանձնարարել էր հետևել իր վարձած քուռ լրտեսներին և չմոռանալ «Ակն ընդ ական» արտահայտությունը:

Սուրենը նախօրոք իմացավ՝ Հայոց աշխարհի գահակալ Արտավազը երբ և ինչպես գնաց Անտիոք, ինչի մասին գրուցեց Կրասուսի հետ: Նրա անխոնջ մարդիկ զինվել էին սաղավարտներով, ասպարներով, աշտեններով և սպասում էին հարձակման հրամանի:

1. Նշե՛ք՝ որտեղից է ծագում « Ակն ընդ ական » արտահայտությունը, և երբ է այն կիրառվում: (2 միավոր)

2. **Սեպուհ, անհողորդ, անխոնջ, ուղերձ** բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ բառ: (2 միավոր)

3. Տեքստում որո՞նք են **համհարզ, պարեզոտ, շողոմ, տեգ, վահան** բառերի հոմանիշները: (2 միավոր)

4. Բառակապակցությամբ բացատրե՛ք **սաղավարտ, հրովարտակ, դրանիկ** բառերի իմաստները: (2 միավոր)

5. **Ականակուռ** բառում բացատրե՛ք **ական** բաղադրիչի իմաստը: (1 միավոր)

6. Գրե՛ք՝ **սեպուհ** արմատով և **ական** ածանցով որ բառն է կազմվել (2 միավոր) :

7. Դո՛ւրս գրեք հիմունքի պարագա պարունակող նախադասությունը և ընդգծե՛ք այն: (2 միավոր)

8. Դո՛ւրս գրեք հեռացված հատկացուցիչ պարունակող նախադասությունը և ընդգծե՛ք այն: (2 միավոր)

Բ. Շարադրություն՝ «Կարոտի կանչով» վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)